

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ**  
**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԲՈՆ**  
**ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՀԱՐՑԱՇԱՐ**

**Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության) մասնագիտության համար**

1. Մանկավարժության հիմնական հասկացությունները,
2. Անձի զարգացման էությունը,
3. Մանկավարժական գործընթացի էությունը և շարժիչ ուժերը,
4. Գաղափար դիդակտիկական համակարգերի մասին,
5. Ուսումնական ծրագրերին, դասագրքերին, մեթոդական ձեռնարկներին ներկայացվող մանկավարժական պահանջները,
6. Ուսուցման պրոցեսում աշակերտների գործնետության հոգեբանական հիմքերը,
7. Ուսուցման սկզբունքների համակարգը,
8. Գաղափար ուսուցման մեթոդների, հնարների և միջոցների մասին,
9. Ուսուցման ժամանակակից մեթոդների դասակարգումը և համառոտ բնութագիրը,
10. Ուսուցման ձևերը /Դալտոն-պլան, Տրամպի-պլան/,
11. Ուսուցման ձևերը /դաս-դասարանային, բեղլ-լանկաստերյան/,
12. Դասի կառուցվածքը և տիպերը,
13. Ժամանակակից դասին ներկայացվող հիմնական պահանջները,
14. Դաստիարակության էությունը, նպատակը և շարժիչ ուժերը,
15. Դաստիարակության գործընթացի առանձնահատկությունները,
16. Դաստիարակության տեսակները և շարժիչ ուժերը,
17. Դաստիարակության օրինաչափությունները,
18. Դաստիարակության սկզբունքների բնորոշումը,
19. Դաստիարակության մեթոդներ, հնարներ ու միջոցներ: Դաստիարակության տեխնոլոգիա,
20. Կոլեկտիվը իբրև դաստիարակության օբյեկտ և սուբյեկտ, զարգացման փուլերը,
21. Դպրոցականների բարոյական դաստիարակության նպատակներն ու խնդիրները
22. Աշխատանքային դաստիարակության նպատակը, խնդիրները և իրականացման ուղիները,
23. Արտադասարանային և արտադպրոցական դաստիարակչական աշխատանքների էությունը:

**«Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա»**

1. Տարրական դասարաններում մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկան որպես մանկավարժական գիտություն և որպես ուսումնական առարկա:
2. Տարրական դասարաններում մաթեմատիկայի դասավանդման մեթոդները և միջոցները:
3. Մաթեմատիկայի դասերի տիպերը տարրական դասարաններում և դրանց կառուցվածքը:
4. Մաթեմատիկայից աշակերտների գիտելիքների ստուգումը և գնահատումը տարրական դասարաններում:
5. Մաթեմատիկայի արտադասարանական աշխատանքների կազմակերպումը տարրական դասարաններում:
6. Թվարկության ուսուցումը «Տասնյակ» և «Հարյուրյակ» համակենտրոններում:
7. Թվարկության ուսուցումը «Հազարյակ» և «Բազմանիշ թվեր» համակենտրոններում:
8. Թվաբանական գործողությունների ուսուցումը «Տասնյակ» համակենտրոնում:
9. Գումարման և հանման գործողությունների ուսուցումը «Հարյուրյակ» համակենտրոնում:
10. Աղյուսակային բազմապատկման և բաժանման համապատասխան դեպքերի ուսուցումը:
11. Արտաաղյուսակային բազմապատկում և բաժանում թեմայի ուսուցումը:
12. Բազմապատկման և բաժանման հատուկ դեպքերի ուսուցումը:
13. «Բաժանում մնացորդով» թեմայի ուսուցումը:
14. Գումարման և հանման գործողությունների ուսուցումը «Հազարյակ» համակենտրոնում:
15. Գումարման և հանման գործողությունների ուսուցումը «Բազմանիշ թվեր» համակենտրոնում:
16. «Բազմապատկում միանիշ թվով և բաժանում միանիշ թվի» թեմայի ուսուցումը:
17. «Բազմապատկում երկնիշ թվով և բաժանում երկնիշ թվի» թեմայի ուսուցումը:
18. «Բազմապատկում եռանիշ թվով և բաժանում եռանիշ թվի» թեմայի ուսուցումը:
19. Բազմապատկման և բաժանման ուսուցումը «Հազարյակ» համակենտրոնում:
20. Թվաբանական գործողությունների ստուգման ուսուցումը:

21. Տեքստային խնդիրների դերն ուսուցման գործընթացում, մաթեմատիկայի տարրական դասընթացում ուսուցավնող տեքստային պարզ խնդիրների դասակարգումը:
22. «Տասնյակ» համակենտրոնում խնդիրների հետ տարվող աշխատանքների մեթոդիկան:
23. «Հարյուրյակ» համակենտրոնում խնդիրների հետ տարվող աշխատանքի մեթոդիկան:
24. Երկարության միավորների ուսուցումը տարրական դասարաններում:
25. Զանգվածի միավորների ուսուցումը տարրական դասարաններում:
26. Ժամանակի միավորների ուսուցումը տարրական դասարաններում:
27. Մակերեսի միավորների ուսուցումը տարրական դասարաններում:
28. Տարրական դասարաններում հանրահաշվական նյութի ուսումնասիրման նպատակները: Թվային արտահայտությունների ուսումնասիրման մեթոդիկան:
29. Հավասարությունների և հավասարումների, անհավասարությունների և անհավասարումների ուսուցման մեթոդիկան:
30. Տարրական դասարաններում երկրաչափական նյութի ուսումնասիրման նպատակները: Երկրաչափական նյութի ուսուցումը «Տասնյակ», համակենտրոնում:
31. Երկրաչափական նյութի ուսուցումը «Հարյուրյակ» համակենտրոնում:
32. Համեմատական մեծությունների վերաբերյալ խնդիրների ուսուցումը:
33. Երկու տարբերությամբ անհայտը գտնելու վերաբերյալ խնդիրների ուսուցումը:
34. Շարժման վերաբերյալ խնդիրների ուսուցումը:
35. Անուղղակի խնդիրների ուսուցումը տարրական դասարաններում:
36. Աշխատանքներ լուծված խնդիրների հետ:
37. Բաղադրյալ խնդիրների ներմուծման մեթոդիկան:
38. Խնդիրների վերլուծման եղանակները՝ համադրական և վերլուծական:
39. Կոտորակների ուսուցման մեթոդիկան տարրական դասարաններում:
40. Տրված թվի մասը և տրված մասով թվի գտնելու վերաբերյալ խնդիրների ուսուցումը:

### *«Մաթեմատիկա, ՄՏԴ տեսական հիմունքներ»*

1. Բազմություն, բազմության տրման եղանակները, հավասար բազմություններ: Դատարկ բազմություն: Ենթաբազմություն: Ենթաբազմությունների թիվը:
2. Բազմությունների միավորումը, այդ գործողության օրենքները:
3. Բազմությունների հատումը, այդ գործողության օրենքները:
4. Համապարփակ բազմություն: Բազմությունների տարբերությունը: Բազմության լրացումը:
5. Բազմության տրոհումը զույգաբար չհատվող ենթաբազմությունների /դասերի/:
6. Համարժեքության և կարգի հարաբերություններ:
7. Գաղափար ասույթների մասին: Ասույթների կոնյունկցիան, դիզյունկցիան:
8. Ասույթների իմպլիկացիան, համարժեքությունը: Դր Մորգանի օրենքները:
9. Հասկացություն տեսության աքսիոմատիկ կառուցման մասին, Պեանոյի աքսիոմները ոչ բացասական ամբողջ թվերի բազմության համար: Մաթեմատիկական ինդուկցիայի մեթոդը:
10. Ոչ բացասական ամբողջ թվերի գումարման աքսիոմատիկ սահմանումը և նրա հիմնական հատկությունները:
11. Ոչ բացասական ամբողջ թվերի բազմապատկման աքսիոմատիկ սահմանումը և նրա հիմնական հատկությունները:
12. Գործողություններ ռացիոնալ թվերի հետ:
13. Սովորական կոտորակի գաղափարը: Կոտորակային թվերի հատկությունները, ռացիոնալ թվերի հատկությունները:
14. Տասնորդական կոտորակներ, նրանց հետ կատարվող թվաբանական գործողությունները, սովորական կոտորակի ձևափոխումը տասնորդականի: Պարբերական կոտորակներ, նրանց ձևափոխումը սովորական կոտորակի:
15. Թվարկության դիրքային և ոչ դիրքային համակարգեր: Տասական համակարգում տրված թվի անցումը q-ական համակարգի և հակառակը: Թվաբանական գործողությունները տարբեր համակարգերում:
16. Բաժանելիության հարաբերությունը ոչ բացասական ամբողջ թվերի բազմությունում և նրա հատկությունները, գումարի, տարբերության և արտադրյալի բաժանելիության հայտանիշները:

17. 2-ի, 4-ի, 5-ի, 25-ի վրա բաժանելիության հայտանիշները:
18. 3-ի, 9-ի, 8-ի, 125-ի վրա բաժանելիության հայտանիշները:
19. Պարզ և բաղադրյալ թվեր: Մեկից մեծ ցանկացած բնական թվի պարզ բաժանարարների գոյության մասին թեորեմը:
20. Պարզ թվերի բազմության անվերջ լինելու վերաբերյալ թեորեմը /ապացույցով/:
21. Բազմապատիկ, բաժանարար: Գաղափար ամենամեծ ընդհանուր բաժանարարի և ամենափոքր ընդհանուր բազմապատիկի վերաբերյալ:
22. Ամենամեծ ընդհանուր բաժանարար, ամենափոքր ընդհանուր բազմապատիկ գտնելու ալգորիթմները, Էվկլիդեսի ալգորիթմը:
23. Արտահայտություններ և դրանց նույնական ձևափոխություններ, նույնություններ: Թվային հավասարություններ և դրանց հատկությունները:
24. Թվային անհավասարություններ և դրանց հատկությունները:
25. Հասկացություն թեորեմի և նրա կառուցվածքի մասին, թեորեմների տեսակները, ապացուցման եղանակները:
26. Մատրիցներ: Գործողություններ մատրիցների հետ:
27. Դետերմինանտներ, նրանց հատկությունները:
28. Գաղափար տոկոսի մասին, տոկոսի վերաբերյալ խնդիրներ:
29. Գծային հավասարումների համակարգերի լուծումը մատրիցային եղանակով: Հակադարձ մատրից:
30. Գծային հավասարումների համակարգերի լուծման Կրամերի եղանակը:
31. Ֆունկցիաների համադրույթ, հակադարձ ֆունկցիա:
32. Վիետի թեորեմը և նրա հետևանքները:
33. Զույգ, կենտ և պարբերական ֆունկցիաներ:
34. Գծային հավասարումների համակարգերի լուծման մատրիցային և Գաուսի եղանակները:
35. Թվային ֆունկցիայի հասկացությունը, ֆունկցիաների տրման եղանակները: Ուղիղ համեմատականություն, նրա հատկությունները և գրաֆիկը:
36. Հակադարձ համեմատականություն, հատկությունները և գրաֆիկը:
37. Քառակուսային հավասարումների լուծումը և գրաֆիկական պատկերումը:
38. Քառակուսային անհավասարումների լուծումը և գրաֆիկական պատկերումը:
39. Գաղափար գծի հավասարման մասին: Շրջանագծի հավասարումը:
40. Ուղղի հավասարումն անկյունային գործակցով: Երկու ուղիղների զուգահեռության և ուղղահայացության պայմանները, երբ նրանց հավասարումները տրված են անկյունային գործակցով:
41. Ուղղի ընդհանուր հավասարումը, երկու ուղիղների հատումը:
42. Ուղիղների ուղղահայացության և զուգահեռության պայմանները, երբ ուղիղները տրված են ընդհանուր հավասարումներով:
43. Ուղղանկյան, զուգահեռագծի, եռանկյան և սեղանի մակերեսների հաշվումը:
44. Հատվածի բաժանումը տրված հարաբերությամբ: Հատվածի միջնակետի կոորդինատները:
45. Կառուցման խնդիրներ: Ուղղահայաց ուղղի, տրված անկյանը հավասար անկյան կառուցելը:
46. Կանոնավոր քառանկյան, վեցանկյան, ութանկյան, տրված երեք հատվածներով եռանկյան կառուցումը:

### *Հայոց լեզու*

1. Հայոց լեզվի զարգացման փուլերը. նոր գրական հայերենի երկու տարբերակները: Ժամանակակից հայոց լեզուն իբրև ազգային, պետական և գրական լեզու:
2. Հայերենի հնչյունական համակարգը:
3. Հնչյունափոխության տեսակները:
4. Բառի հատկանիշները և սահմանումը:
5. Բառերի տեսակներն ըստ ձևի և իմաստի փոխհարաբերության:
6. Բառակազմություն: Ածանցում և բառաբարդում: հայերենի ածանցների դասակարգումը:
7. Դարձվածային միավորներ. նրանց դասակարգումը և գործածությունը խոսքի (բնագրի) մեջ:

8. Գոյականն իբրև խոսքի մաս. իմաստային-քերականական խմբերն ու քերականական կարգերը:
9. Ածական անուն. տեսակները, համեմատության աստիճանները և կիրառությունները:
10. Թվական անուն, տեսակները, կազմությունը և ուղղագրությունը:
11. Դերանուն: Տեսակները: Կիրառությունները: Դերանվանական հոլովում:
12. Բայը որպես խոսքի մաս: Կազմությունը և քերականական հատկանիշները:
13. Անդեմ բայեր: Նրանց դասակարգումը. անկախ (բուն) և կախյալ (ձևակազմիչ) դերբայներ:
14. Դիմավոր բայեր: Նրանց հատկանիշները:
15. Մակբայ: Տեսակները, կազմությունը, շարահյուսական կիրառությունները:
16. Կապ և շաղկապ խոսքի մասերը, նրանց տեսակները, կիրառությունները:
17. Վերաբերական և ձայնարկություն խոսքի մասերը. տեսակները, կիրառությունները:
18. Բառակապակցություն. բառակապակցությունների դասակարգումը:
19. Նախադասություն. նախադասության հիմնական հատկանիշները և տեսակները:
20. Նախադասության գլխավոր անդամներ և նրանց արտահայտությունը:
21. Նախադասության երկրորդական անդամներ /գոյականական և բայական անդամի լրացումներ/:
22. Բարդ նախադասություն: Բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասություններ: Տեսակները:
23. Բարդ ստորադասական նախադասության փոխակերպում և դերբայական դարձված:
24. Բազմաբարդ նախադասություններ:
25. Հայերենի կետադրությունը, տրոհության, առոգանության և բացահայտության նշանները, նրանց կիրառությունները:

### ***Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա***

1. 6 տարեկան երեխաների տարիքային առանձնահատկությունները. ուշադրության, հիշողության, մտածողության և խոսքի բնութագիրը:
2. Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկայի բաժինները: Դրանց հակիրճ բնութագիրը:
3. Գրաձանաչության մեթոդիկա: Ժամանակակից՝ վերլուծական-համադրական հնչյունաբառային, հնչյունավանկային մեթոդը:
4. Նախաայբբենական շրջանի հիմնական խնդիրները և մանկավարժամեթոդական պահանջները:
5. Գրաձանաչության այբբենական շրջանի հիմնական խնդիրները: Հնչյուն-տառերի ուսուցման մեթոդական շղթան:
6. Գրաձանաչության հետայբբենական շրջանի հիմնական նպատակները և խնդիրները: Դրանց իրականացման մեթոդիկան:
7. Ընթերցանության մեթոդիկա: Ընթերցանության կազմակերպման խնդիրներն ու նպատակները տարրական դասարաններում: Կարդալու տեսակները:
8. Քերականության մեթոդիկա: Տարրական գիտելիքներ հնչյունաբանությունից, բառագիտությունից և բառակազմությունից:
9. Տարրական գիտելիքներ ձևաբանությունից: Խոսքի մասերի տարբերակում և ուսուցում:
10. Տարրական գիտելիքներ շարահյուսությունից: Գաղափար տեքստի, պարբերության, նախադասության մասին:
11. Խոսքի զարգացման մեթոդիկայի գիտական հիմքերը: Խոսքի տեսակները:
12. Բանավոր խոսքի զարգացում: Գրավոր խոսքի զարգացում: